# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ԷՆ-ԾՀԱՊՁԲ-15/3-16-09 -108-16

ք. Երևան <<28>> <<09>> >> 2016թ.

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,** ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա.Շահնազարյանի,** որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և **«Սմարթլայն» ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Տ.Ղարիբյանի** (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր** / այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **3298110** (երեք միլիոն երկու հարյուր իննսունութ հազար մեկ հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով,

նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2016 թ.** :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**<br>Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5<br>Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>ՀՎՀՀ՝ 02505983 | **«Սմարթլայն» ՍՊԸ**<br>Հասցե ք.Երևան, Վարդանանց 110<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ՝ 130009537660100<br>ՀՎՀՀ՝ 01548908 |
| Ա.Շահնազարյան | Տ. Ղարիբյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«28» «09» 2016 թ. կնքված

N ՀՀ ԷՆ-ԾՀԱՊՁԲ-15/3-16-09-108-16 ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ չափ. | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|
| 1 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | A4, չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ առնվազն 80 գ/մ2 (առանց շեղումների), չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների), առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության: Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար: Պիտանի՝ լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար: Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 100%-ից ոչ պակաս, հաստությունը՝ 108մկմ, անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս, անհարթությունը ոչ ավել՝ 180մլ/ր՝, խոնավությունը՝ 3,5-4,5%, արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի, օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր, գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների): Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ, տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%, ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ$^3$, ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ$^3$, Pioneer: |
| 2 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | Թուղթ նշումների համար, կպչուն, չափսը՝ 76.2x76.2մմ տրցակում էջերի քանակը՝ 100 էջ, Fantastic: |
| 3 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | Թերթիկներ նշումների համար, սոսնձվածքով 90մմx90մմ, առնվազն 900էջ, 80գր. գունավոր, Sinarline: |
| 5 | Էջաբաժանիչ պլաստիկ | Էջաբաժանիչ, պլաստիկ, A4, գունավոր, 12 բաժանում: |
| 7 | Ծրար մեծ A4 ձևաչափի համար | Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող: |
| 8 | Ծրար մեծ A4 ձևաչափի համար | Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, շագանակագույն, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով, N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող: |
| 9 | Թղթապանակ կոշտ կազմով | Թղթապանակ ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, ներսի մակերեսը լամինապատված, 4-8սմ հաստությամբ, գույնը՝ սև, կարմիր, կապույտ, պատվիրատուի ընտրությամբ: |
| 10 | Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ | Թափանցիկ պոլիմերային թաղանթից, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու համար, տուփով, 70 միկրոն, ամուր եզրերով, հարթ մակերեսով, փայլուն: |
| 11 | Թղթապանակ թելով թղթյա | Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ: |
| 12 | Թղթապանակ | Թղթապանակ ցուցադրական 40 թափանցիկ ֆայլերով, A4 ֆորմատի, գույնը՝ կանաչ, կարմիր, կապույտ, պատվիրատուի ընտրությամբ: |
| 13 | Թանաք կնիքի բարձիկի համար | Թանաք կնիքի բարձիկի համար, 30մլ, սրվակով, բարձր որակի, Horse : |
| 14 | Կնիքի լրացուցիչ բարձիկներ | Բարձիկ դրոշմակի (կնիքի) համար, տուփով, սպունգի կամ կտորի բարձիկով, R 50, Horse: |
| 15 | Կնիքի լրացուցիչ բարձիկներ | Բարձիկ կնիքի համար, ER-40, "Colop": |

| | | |
|---|---|---|
| 16 | Գրիչ գնդիկավոր | Գրիչ գնդիկավոր, 0.6մմ ծայրով, ռետինե բռնակով, բարձր որակի, տարբեր գույների, պատվիրատուի ընտրությամբ, Cello Finegrip,բարձր որակի: |
| 17 | Գրիչ գելային | Գրիչ գելային, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, պատվիրատուի ընտրությամբ, բարձր որակի: |
| 18 | Գրիչ գելային | Գրիչ գելային Jet Stream/SX-210/, 1.0մմ, գույնը՝ կապույտ/սև, բարձր որակի: |
| 19 | Սրիչ, սովորական | Սրիչ սովորական գրաֆիտե մատիտի համար, մետաղյա, Maped: |
| 21 | Շտրիխներ | Ուղղիչ գրիչ, 10մլ, Cosmic : |
| 22 | Մկրատ գրասենյակային | Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսե բռնակով, 18 սմ երկարությամբ, չժանգոտող պողպատից: |
| 23 | Սեղմակ փոքր | Մետաղական, լայնությունը 19 մմ, 40-60 էջ ամրացնելու համար: |
| 24 | Սեղմակ միջին | Մետաղական, լայնությունը 25 մմ, 60-90 էջ ամրացնելու համար: |
| 26 | Կարիչ 20-50 թերթի համար | Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար, ծակման խորությունը 110մմ, բարձր որակի, Kangaro: |
| 27 | Կարիչի մետաղալարե կապեր փոքր | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով՝ N 10, տուփի մեջ 1000 հատ, Kangaro : |
| 28 | Կարիչի մետաղալարե կապեր միջին | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով ՝ N 24/6, տուփի մեջ 1000 հատ, Kangaro : |
| 30 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմx36մ տնտեսական մեծ | Գլանափաթեթված ժապավեն 19մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030մմ, ժապավենի երկարությունը՝ 36մ, թափանցիկ: |
| 31 | Հաշվասարք գրասենյակային | Հաշվիչ սեղանի, առնվազն 12 նիշանի, մեծ չափսի, ինքնալիցքավորվող, Flamingo , բարձր որակի: |
| 32 | Գրատախտակներ | Գրատախտակ մարկերային՝ հենակալով, չափսերը՝ 70x100սմ: |
| 33 | Մարկերներ | Մարկեր նախատեսված գրատախտակի համար: |

ԳՆՈՐԴ

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
հ/հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

_____ Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե ք.Երևան, Կարեն Դեմիրճյան 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հ/հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

_____ Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«29» «09» 2016թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ԵՀԱՊՁԲ -15/3-16-09-108-16 ծածկագրով գնման պայմանագրի

## ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ էապ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | հատ | 1720 | - | - | - | - | - | - | 1500 | 2580000 | 1500 | 2580000 |
| 2 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | հատ | 145 | - | - | - | - | - | - | 100 | 14500 | 100 | 14500 |
| 3 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | հատ | 900 | - | - | - | - | - | - | 100 | 90000 | 100 | 90000 |
| 5 | Էջաբաժանիչ պլաստիկ | հատ | 360 | - | - | - | - | - | - | 50 | 18000 | 50 | 18000 |
| 7 | Ծրար մեծ A4 ձևաչափի համար | հատ | 30 | - | - | - | - | - | - | 2000 | 60000 | 2000 | 60000 |
| 8 | Ծրար մեծ A4 ձևաչափի համար | հատ | 32 | - | - | - | - | - | - | 2000 | 64000 | 2000 | 64000 |
| 9 | Թղթապանակ կոշտ կազմով | հատ | 590 | - | - | - | - | - | - | 200 | 118000 | 200 | 118000 |
| 10 | Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ | հատ | 15 | - | - | - | - | - | - | 4000 | 60000 | 4000 | 60000 |
| 11 | Թղթապանակ թելով թղթյա | հատ | 58 | - | - | - | - | - | - | 500 | 29000 | 500 | 29000 |
| 12 | Թղթապանակ | հատ | 350 | - | - | - | - | - | - | 200 | 70000 | 200 | 70000 |
| 13 | Թանաք կնիքի բարձիկի համար | հատ | 120 | - | - | - | - | - | - | 10 | 1200 | 10 | 1200 |
| 14 | Կնիքի լրացուցիչ բարձիկներ | հատ | 2200 | - | - | - | - | - | - | 5 | 11000 | 5 | 11000 |
| 15 | Կնիքի լրացուցիչ բարձիկներ | հատ | 1500 | - | - | - | - | - | - | 2 | 3000 | 2 | 3000 |
| 16 | Գրիչ գնդիկավոր | հատ | 65 | - | - | - | - | - | - | 80 | 5200 | 80 | 5200 |
| 17 | Գրիչ գելային | հատ | 95 | - | - | - | - | - | - | 200 | 19000 | 200 | 19000 |
| 18 | Գրիչ գելային | հատ | 900 | - | - | - | - | - | - | 50 | 45000 | 50 | 45000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Սրիչ, սովորական | հատ | 240 | - | - | - | - | - | - | 50 | 12000 | 50 | 12000 |
| 21 | Շտրիխներ | հատ | 210 | - | - | - | - | - | - | 50 | 10500 | 50 | 10500 |
| 22 | Մկրատ գրասենյակային | հատ | 190 | - | - | - | - | - | - | 10 | 1900 | 10 | 1900 |
| 23 | Սեղմակ փոքր | հատ | 9 | - | - | - | - | - | - | 130 | 1170 | 130 | 1170 |
| 24 | Սեղմակ միջին | հատ | 18 | - | - | - | - | - | - | 230 | 4140 | 230 | 4140 |
| 26 | Կարիչ 20-50 թերթի համար | հատ | 1400 | - | - | - | - | - | - | 15 | 21000 | 15 | 21000 |
| 27 | Կարիչի մետաղալարե կապեր փոքր | տուփ | 65 | - | - | - | - | - | - | 50 | 3250 | 50 | 3250 |
| 28 | Կարիչի մետաղալարե կապեր միջին | տուփ | 125 | - | - | - | - | - | - | 100 | 12500 | 100 | 12500 |
| 30 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմx36մ տնտեսական մեծ | հատ | 40 | - | - | - | - | - | - | 50 | 2000 | 50 | 2000 |
| 31 | Հաշվասարք գրասենյակային | հատ | 4500 | - | - | - | - | - | - | 2 | 9000 | 2 | 9000 |
| 32 | Գրատախտակներ | հատ | 32000 | - | - | - | - | - | - | 1 | 32000 | 1 | 32000 |
| 33 | Մարկերներ | հատ | 250 | - | - | - | - | - | - | 3 | 750 | 3 | 750 |
| **Ընդամենը** | | | | - | - | - | | | | - | **3298110** | - | **3298110** |

ԳՆՈՐԴ

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ'900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ' 02505983

**Ա.Շահնազարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

**Տ. Դարիբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
<<19>> << 09 >> 2016թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N ՀՀ ԷՆ-ԾՀԱՊՁԲ-15/3-16-09 - 108-16

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ չափ. | Ապրանքի անվանումը | Տնտ. դասակարգում | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 2580000 | 2580000 | 2580000 | 2580000 |
| 2 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 14500 | 14500 | 14500 | 14500 |
| 3 | Թուղթ նշումների համար սոսնձվածքով | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 90000 | 90000 | 90000 | 90000 |
| 5 | Էջաբաժանիչ պլաստիկ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 7 | Ծրար մեծ A4 ձևաչափի համար | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 8 | Ծրար մեծ A4 ձևաչափի համար | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 64000 | 64000 | 64000 | 64000 |
| 9 | Թղթապանակ կոշտ կազմով | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 118000 | 118000 | 118000 | 118000 |
| 10 | Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 11 | Թղթապանակ թելով թղթյա | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 29000 | 29000 | 29000 | 29000 |
| 12 | Թղթապանակ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 70000 | 70000 | 70000 | 70000 |
| 13 | Թանաք կնիքի բարձիկի համար | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 14 | Կնիքի լրացուցիչ բարձիկներ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| 15 | Կնիքի լրացուցիչ բարձիկներ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 16 | Գրիչ գնդիկավոր | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 5200 | 5200 | 5200 | 5200 |
| 17 | Գրիչ գելային | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 19000 | 19000 | 19000 | 19000 |
| 18 | Գրիչ գելային | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 45000 | 45000 | 45000 | 45000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Սրիչ, սովորական | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 21 | Շտրիխներ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 10500 | 10500 | 10500 | 10500 |
| 22 | Մկրատ գրասենյակայ ին | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 1900 | 1900 | 1900 | 1900 |
| 23 | Սեղմակ փոքր | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 1170 | 1170 | 1170 | 1170 |
| 24 | Սեղմակ միջին | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 4140 | 4140 | 4140 | 4140 |
| 26 | Կարիչ 20-50 թերթի համար | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 21000 | 21000 | 21000 | 21000 |
| 27 | Կարիչի մետաղալարե կապեր փոքր | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 3250 | 3250 | 3250 | 3250 |
| 28 | Կարիչի մետաղալարե կապեր միջին | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 12500 | 12500 | 12500 | 12500 |
| 30 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմx36մ տնտեսական մեծ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 31 | Հաշվասարք գրասենյակայ ին | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 9000 | 9000 | 9000 | 9000 |
| 32 | Գրատախտա կներ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 32000 | 32000 | 32000 | 32000 |
| 33 | Մարկերներ | 4261 | - | - | - | - | - | - | - | - | - | 750 | 750 | 750 | 750 |
| **Ընդամենը** | | | - | - | - | - | - | - | - | - | - | **3298110** | **3298110** | **3298110** | **3298110** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505988

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

**«Սմարթլայն» ՍՊԸ**
Հասցե ք.Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

Տ.Լարիոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
«29» «09» 2016թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ -15/3-16-09-108-16 ծածկագրով գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ _____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
<< 29 >> << 09 >> 2016թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N ՀՀ ԷՆ-ԾՀԱՊՁԲ -15/3-16-09 -108-56

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն